Ալեքսանդր Ծատուրյան

Երկու պատկեր

I

Հզոր ժողովուրդ, փառավոր անուն,
Ազգաշինության փառավո՛ր գործեր.
Արձակ ասպարեզ, անձնազոհություն,
Ազգային փառքի քաջանուն զոհեր…
Գահ ու պալատներ, թագ ու թագավոր,
Ազատ ծածանվող ազգային դրոշակ,
Զենք ու զրահներ, անձնուրաց զինվոր,
Մահ հերոսական կամ քաջ հաղթանակ…
Պանծալի՛ օրեր, փառաշո՛ւք հրոչակ
Անկախ աշխարհի, ազգի մեծության.
Գեղեցիկ պատկեր… Իսկ պատկերի տակ
Անցյալդ եմ կարդում, ազա՛տ Հայաստան:

II

Անարգված անուն, թշվառ ժողովուրդ,
Բրոնավոր ձեռքի արյուն, կոտորած.
Սրտի մեջ խեղդվող բաղձանք ու խորհուրդ,

Փրկության քարոզ՝ շրթունքին սառած…
Բանտ ու աքսորանք, անսանձ բռնություն,
Ազգ ու հայրենիք ճնշող լրծի տակ,
Զորավոր շղթա, անզոր ստրկություն,
Փշրված թագ ու զենք, տապալված դրոշակ…
Եվ ամենուրեք միա՛յն ավերակ,
Միայն անցյալի տխուր ուրվական.
Ողբալի՜ պատկեր… Իսկ պատկերի տակ
Ներկաղ եմ կարդում, ստրո՛ւկ Հայաստան: